

Հայտարարության ընդունման հիմնավորում

2020թ. սեպտեմբերի 27-ից սկսած Արցախի Հանրապետությունը 44 օր շարունակ ենթարկվել է ահաբեկիչ վարձկաններով համալրված թուրք-ադրբեջանական զինված ուժերի ագրեսիայի:

Պատերազմի սանձազերծումն Ադրբեջանի կողմից Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմքում ընկած հիմնարար սկզբունքներից մեկի՝ ուժի չկիրառման սկզբունքի կոպտագույն խախտում էր:

2020-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ձեռք է բերվել հրադադարի համաձայնություն, որի ոչ բոլոր կետերն են կյանքի կոչվել, մասնավորապես՝ հայ ռազմագերիների և այլ պահվող անձանց վերադարձի մասով: Կողմերը պարտավորվել են գնալ տարածաշրջանային լարվածության թուլացման, կոմունիկացիաները գործարկելու, ապաշրջափակման, սահմանազատման ու սահմանագծման աշխատանքների իրականացման ճանապարհով, սակայն իրականում կան բազմաթիվ խոչընդոտներ կայուն և արժանապատիվ խաղաղության հաստատման համար:

Հայտարարությունից հետո Ադրբեջանը ներխուժել է ՀՀ ինքնիշխան տարածք և խոսում է վերջնագրերի լեզվով՝ սպառնալով մեր անվտանգային միջավայրին:

Օկուպացված Շուշիում 2021թ. հունիսի 15-ին Թուրքիայի ու Ադրբեջանի նախագահները ստորագրել են հռչակագիր, որն ամբողջությամբ ուղղված է Հայաստանի ու Արցախի դեմ: Այն լրջագույն սպառնալիքներ ու մարտահրավերներ է առաջացնում ՀՀ տարածքային ամբողջականության ապահովման, Արցախի ինքնորոշման իրավունքի

իրացման և խնդրի վերջնական լուծման, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցերում:

Հռչակագիրն այդ հակասում է նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընդունված հիմնարար սկզբունքներին, միջազգային իրավունքի հանրահայտ նորմերին, ուստի չի կարող համարվել լեգիտիմ:

Թեև ՀՀ գործադիր իշխանությունն՝ ի դեմս Արտաքին գործերի նախարարության, 2021-ի հունիսի 15-ի (https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/06/15/Erdogan_visit_Shushi/10994) և հունիսի 17-ի (https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/06/17/mfa_statement_on_the_decl/10995)

հայտարարություններով անդրադարձել է Շուշիի հռչակագրին՝ այն որակելով որպես հակահայկական սադրանք և սպառնալիք տարածաշրջանային անվտանգությանը, այնուամենայնիվ անհրաժեշտ է Շուշիի հռչակագրին գնահատական տալ նաև ՀՀ խորհրդարանի մակարդակով, քանզի Ադրբեջանի ու Թուրքիայի խորհրդարանները դրանք վավերացրել են: ՀՀ ԱԳՆ-ը՝ որպես գործադիր ներկայացուցիչ, արձագանքել է Թուրքիայի ու Ադրբեջանի գործադիր մարմինների ղեկավարների որոշումներին: Հիմա փաստաթուղթը տեղափոխվել է Ադրբեջանի ու Թուրքիայի խորհրդարանների հարթություն և վավերացվել, հետևաբար ՀՀ խորհրդարանը՝ որպես առաջնային մանդատի կրող պետական կառույց, պետք է իր գնահատականը տա հռչակագրի վավերացմանը՝ այդպիսով ընդգծելով մեր

մտահոգությունների խորությունը և ՀՀ վերաբերմունքն ակնհայտ թշնամական այդ փաստաթղթին: ՀՀ ԱԺ լուծությունն այս թեմայով կդառնա համաձայնության նշան, այսինքն՝ կստացվի, որ ՀՀ խորհրդարանը դեմ չէ Արցախն Ադրբեջանի կազմում տեսնելուն, դեմ չէ Հայոց ցեղասպանության թեման պատմաբանների ուսումնասիրման դաշտ տեղափոխելուն:

Հոչակագրին գնահատական տալը կարևոր է նաև հայ-ադրբեջական ու հայ-թուրքական հարաբերությունների ներկա օրակարգերը հաշվի առնելով:

Մասնավորապես՝ Թուրքիան հայտարարել է, որ պատրաստ է հայ-թուրքական հարաբերությունները կարգավորել առանց նախապայմանների, այնինչ հոչակագրի վավերացումը հակադրության մեջ է մտնում այդ հայտարարության հետ:

«Շուշիի հոչակագրի» վերաբերյալ ԱԺ հայտարարության ընդունումը բխում է ՀՀ անվտանգային միջավայրի ամրապնդման շահերից: Հայտարարությունը մեսիջ կլինի ՀՀ քաղաքացիներին, աշխարհասփյուռ հայությանը, միջազգային հանրությանը, որ անվտանգային հարցերում ՀՀ-ն ունի կարմիր գծեր և չի նահանջելու դրանցից: